

Զմարմինս արի մեղաց ամպար .
Զինչ ժողովէ մ(ա)րդն ու լընու ,
Զաստընւորի կեղտ ու թարախ .
Եւ զմազլամէն զամէնն տանու :

Զայս ամպարեալ մեղքս որ ունիմ .
Որ եմ բցեալ նման խորու ,
Արջու նման եմ անփոփէր .
Զինչ որ թաղէ զգէշն ի խորու :

Արջն է ազահ ք(ա)ն զամէն զազան ,
Որ ապրած է ամէն գիշու :
Զի խնայեր գեչք եւ ի խոտ .
Ոչ ի պտուղ ամէն ծառու :

Նոյնպէս եմ ես ազահացեր .
Դէմ զրկանաց ճ(ա)շ(ա)կելու ,
Լերանց նման մեղք եմ կուտեր .
Ճարակ չկայ թեթեւալու :

Աստընւորիս գիրկ եմ ածեր .
Ճանկ եմ շիներ ք(ա)ն զարծըլու ,
Որսամ զամէն մեղք ու չարիք .
Եւ ժ(ո)ղ(ո)վեմ վ(ա)ս(ն) ապրելու :

Ո(ր)պ(էս) մըջեմն ու ժ(ո)ղ(ո)վէ .
Եւ զմըկնափոր տեղն լընու ,
Կուտէ անչափ եւ անհամար .
Բերէ ըզչիւղն յամէն խոտու .

Այսպ(էս) եմ ես ազահացեալ .
Զրկանս մեղաց եւ նախանձու ,
Լերանց նման մեղք եմ կուտեր .
Բ(ա)ղ(ու)մ ո(ր)պ(էս) զաւաղ ծովու :

Ծանրազնաց բեռ ու շալակ .
Եւ վերուցեր չէ թընդալու ,
Նաւի նման զարդեմ եղեր .
Հասեր ի ժ(ա)մն ընկղմելու :